ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 2-ի №296Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 2-ի №296-Ն որոշման 1-ի կետով հաստատված ջրային ոլորտում սակագների սահմանման և վերանայման կարգի (այսուհետ՝ կարգ) №1 հավելվածի՝ սակագների սահմանման կամ վերանայման վերաբերյալ հայտատուի մտադրության մասին հայտարարությունը պետք է տպագրվի ՀՀ երկու հազարից ավելի տպաքանակ ունեցող երկու թերթերում և հայտարարությունը ուժի մեջ է դրա տպագրման օրվանից 30 օրվա ընթացքում: Ներկայիս իրողություններում, երբ թերթերի հիմնական մասը անցում է կատարել թվային միջավայր, նվազել է թերթերի տպաքանակը, նշված դրույթը տեխնիկական բնույթի անհարմարություններ է ստեղծում ջրային ոլորտում սակագների սահմանման և վերանայման հայտ ներկայացնողների համար, հատկապես ամռան ամիսներին, երբ թերթերի խմբագրությունները գնում են արձակուրդ: Բացի այդ, 2021 թվականից խոցելի (սոցիալապես անապահով) համարվող բաժանորդներն առանձնացվել են որպես առանձին սպառողական խումբ և սակագների սահմանման ընթացքում անհրաժեշտություն է առաջացել վերջիններիս ջրամատակարարման ծավալների վերաբերյալ տեղեկատվության ստացումը կարգով նախատեսված ձևերով:

Հաշվի առնելով նշվածը և նպատակ ունենալով ջրային ոլորտում սակագների սահմանման և վերանայման կարգի դրույթները (հայտը հանձնաժողով ներկայացնելու, հայտն ընդունելու, չընդունելու կամ մերժելու հիմքերի հստակեցում) համապատասխանեցնել հանրային ծառայությունների կարգավորվող այլ ոլորտներում գործող միասնական կարգավորումներին՝ անհրաժեշտություն է առաջացել համապատասխան փոփոխություններ կատարել նաև ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 2-ի №296-Ն որոշմամբ հաստատված ջրային ոլորտում սակագների սահմանման և վերանայման կարգում:

2. *Առաջարկվող կարգավորման բնույթը*

Նախագծով առաջարկվում է.

ա) Հաշվի առնելով սպառողների սակագների սահմանման ժամանակ հասարակության լայն շրջանակներին իրազեկելու անհրաժեշտությունը և թերթերի տպագրման ոլորտում ներկայիս իրողությունները՝ հնարավորություն ընձեռել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 2-ի №296-Ն որոշման 1-ի կետով հաստատված ջրային ոլորտում սակագների սահմանման և վերանայման կարգի №1 հավելվածով նախատեսված՝ սակագների սահմանման կամ վերանայման մտադրության վերաբերյալ հայտարարությունը հրապարակել կամ ՀՀ-ում տպագրվող երկու օրաթերթերում կամ դրանց պաշտոնական կայքէջերում,

բ) սահմանման կամ վերանայման մտադրության վերաբերյալ հայտարարության ուժի մեջ լինելու ժամանակահատվածը 30 օրվա փոխարեն նախատեսել 20 աշխատանքային օր,

գ) հայտը հանձնաժողով ներկայացնել 1 օրինակից, գործող 2 օրինակի փոխարեն,

դ) ավելացնել դրույթ՝ հայտատուի կողմից հայտի ուսումնասիրությունը դադարեցնելու մասին,

ե) կարգով հաստատված ձևերում ավելացնել տողեր՝ խոցելի (սոցիալապես անապահով) համարվող բաժանորդների վերաբերյալ տեղեկատվության ստացման և որպես առանձին սպառողական խումբ սակագների սահմանման նպատակով:

Բացի այդ, նախագծով առաջարկվում է իրականացնել խմբագրական բնույթի փոփոխություններ՝ կարգում և կարգով հաստատված ձևերում տեղ գտած առանձին դրույթները համապատասխանեցնելով հանրային ծառայությունների կարգավորվող այլ ոլորտներում գործող միասնական կարգավորումներին:

3. *Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք*

Նախագիծը մշակվել է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից:

4. *Ակնկալվող արդյունքը*

Նախագծի ընդունման արդյունքում ջրային ոլորտում սակագների սահմանման կամ վերանայման հայտի ներկայացման գործընթացում կվերանան տեխնիկական խոչընդոտներով կամ անհարմարություններով պայմանավորված ռիսկերը և ժամկետների հետաձգումները: